Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2018.

Իջևանում բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոնի կառուցման ծրագրի ավարտի արարողությունը

2019 թ. հոկտեմբերի 3-ին, Տավուշի մարզի Իջևան քաղաքում տեղի ունեցավ «Իջևանում բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոնի կառուցման ծրագրի» 68,438 ԱՄՆ դոլար (7,665,056 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, Տավուշի թեմի առաջնորդ եպիսկոպոս Բագրատ Գալստանյանը, Տավուշի մարզպետ պարոն Հայկ Չոբանյանը, Իջևանի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար պարոն Հայկ Ղալումյանը և ուրիշներ:

Ծրագրի նպատակն է Իջևան քաղաքում հիմնել բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն, որն ապահովում է տարածաշրջանում խոցելի բնակչության, հատկապես կանանց և երիտասարդների համար սոցիալ-կրթական, մասնագիտական վերապատրաստման և սոցիալ-հոգեբանական ծառայություններ: Կենտրոնում առաջարկվող տարբեր ծրագրերից օգտվելու են ավելի քան 1000 կանայք և երիտասարդներ: Կենտրոնը նաև մոտ 30 աշխատատեղի հնարավորություն կստեղծի: Ծրագիրը Տավուշի թեմի բազմակողմ համագործակցության արդյունք է կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, բիզնես կազմակերպությունների, ՀԿ-ների և մասնավոր բարերարների հետ: Ճապոնիայի կառավարության կողմից իրականացվել է շենքի ներքին կառուցապատումը, Իջևանի քաղաքապետարանը հողատարածք է տրամադրել, ՄԱԲՀ-ն ֆինանսավորելու է մասնագիտական վերապատրաստման դասընթացները, Պահապան ՀԿ-ն իրականացնելու է մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, իսկ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Միջեկեղեցական Կլոր Սեղան բարեգործական հիմնադրամը հոգալու է կենտրոնի գործառնական ծախսերը:

Համայնքային կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը

Դեսպան Յամադան կտրում է բացման խորհրդանշական կարմիր ժապավենը

Դեսպան Յամադան ձիթենին տնկելիս

Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի ողջույնի խոսքը

Երեխաների երգչախումբը

Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը

Տավուշի մարզպետ պարոն Չոբանյանի ողջույնի խոսքը

Դեսպան Յամադան Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի կողմից արժանացավ առաջնորդական գնահատանքի գրի

«Պահապան» զարգացման հիմնադրամի տնօրեն տիկին Հարությունյանին տրվեց առաջնորդական գնահատանքի գիր

Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը համայնքային կենտրոնի շենքի առջև

Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհային աջակցության ցուցատախտակը